№ 261 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 261

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տելեֆոն № 253.

Ամբաղրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միենոյն ժամանակ 40 կոպ. նամակադրոշմ:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ:

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, երեքշաբթի, նոյեմբերի 23-ին տեղի կունենայ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մօսկվայից հրաւիրված դասախօսական բիւրօյի անդամ

Ի. Գ. ԿՈՒԼԺԻՆՍԿԻՆ

պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար կը կարդայ իր առաջին դասախօսութիւնը հետեւեալ թեմայով՝

«ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

Դասախօսութեանը կարող են ներկայ լինել պ. պ. անդամների և կանդիդատների սովորող զաւակները:

Դասախօսութեան մուտքը դահլիճ ձրի է:

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին:

Ա.ԶԴ.—Կուլժինսկիի երկրորդ դասախօսութիւնը շաբաթ, նոյեմբերի 27-ին:

(առ.) 1302. 1—1

ՅԱՐԱՆՍԵՐԷՆ լեզուի եւ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ (Հայուհի)

ցանկանում է դասեր ունենալ թեթև ընտանիքում: Հաճայն է ուրիշ քաղաքներ գընալու: կարող է ուղեկցել թարգմանի պաշտօնով՝ արտասահման գնացող որևէ տիկնոջ: Հասցէն տեղեկանալ «Մշակի» գրասենեակից: (առ.) 1301. 2—1

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷԶ

Մենք հրաւիրում ենք բարձրագոյն կրթութիւն ստացող մեր ուսանող երիտասարդութեան մի մասի ուշադրութիւնը այն նոր ասպարէզի վրա, որ բացվում է նրանց մերձաւոր գործունէութեան համար:

Դա ուսումնասիրական այն նոր գործն է, որը հարկաւոր է հողային հարկաւորութեան նոր օրինագիծ մշակելու համար:

Մենք խօսեցինք այն գործի մասին և յայտնեցինք, որ դիտաւորութիւն կայ ձեռնարկել նրա սկզբնաւորութեանը 1912 թւի յունվարից: Իսկ, անշուշտ, նախապատրաստութիւններ կը տեսնվեն աւելի վաղ:

Հարկաւոր են գալու մեծ թւով վիճակագրողներ, հողաչափներ, ընութիւնը և տնտեսութիւնը հետազօտողներ, հաշւապահներ:

Աչքի առաջ ունենալով այդպիսի աշխատանքի պահանջը, մեր ուսանողութեան այն մասը, որի մասնագիտութիւնը մօտ է ենթադրեալ գործի էութեանը, կարող է լուրջ կերպով պատրաստվել օգտաւէտ գործող լինելու մի ասպարէզում, որը կը լինի միենոյն ժամանակ և գեղեցիկ ուսանելի զարոց ապագայ գործունէութեան համար:

Արդարև, գիւղատնտեսները, իրաւաբանները, հողաչափները և ուրիշ մասնագիտութիւնների ուսանողները եթէ պատրաստվեն ուսումնասիրական գործի համար առաջիկայ 1911 թւի ընթացքում, նրանք ցանկալի ոյժեր կը լինեն նոր ծրագրվող խոշոր ձեռնարկութեան համար:

Վիճակագրութիւն լուրջ և կարող մարդկանց ձեռքին մի էական, արդիւնաբար գործ է, որը նշանակութիւն ունի թէ գիտական, թէ գործնական տեսակէտներով: Իսկ վատ կազմակերպված վիճակագրութիւնը մի դժբաղդութիւն է, մի վնասակար երեւոյթ, որովհետև նա կարող է մեծ սխալների առիթ լինել և մոլորութիւններ էր ձգել, օգը՝ լցված կազդուրիչ թարմութեամբ, անտառը խորհրդաւոր լռութեան մէջ ընկղմած՝ մնացել էին անշարժ... միայն արծաթափայլ լեռնային վտակն էր, որ ձորի խորքերից օր ու գիշեր իր դարաւոր դարդն էր պատմում. բայց ով էր հասկանում նրա խռովարար լեզուն...

Մութն արդէն ընկել էր, երբ մենք սկսեցինք գիշերվայ հանգստութեան համար պատրաստութիւններ տեսնել. վանքի աւերեալ պատի երկարութեամբ շարեցին միմեանց մօտ 5—6 հատ հին փայտեայ թախտեր, որոնց վրա ձգեցինք մեզ հետ բերած տեղաշորերը, և այդպէս՝ ով ինչպէս կարողացաւ—տեղաւորվեց. այդ գիշերը մենք պիտի քնէինք բաց երկնքի տակ: Հաղարծնի լեռնային բարձրութեան վրա, շրջապատված անտառներով, ուր ցուրտը զգալի չափով սաստկանում է արևը մայր մտնելուց յետոյ: Որոշ դժուարութեան հանդիպեց մեր աղջկերանց տեղաւորելու գործը. բայց նրանց համար ևս պատկերլու յարմարութիւններ ստեղծվեցին շնորհիւ օր. Շ. Ռ—նի մայրական հոգատարութեան. իրօք՝ նա սանուհիների համար մայր էր և ոչ պաշտօնեայ: Նրա վրա ծանրացած էր և մեր ուղևորութեան տնտեսական մասի լուծը, որ ինչպէս յայտնի է, հաճելի պարտականութիւններից չէ. բայց այդ մասում ևս մեր յարգելի ընկերը իր հանգստութիւնը մոռացած մեզ բոլորիս գոհացնելու և լիուլի բաւականութիւն տալու ջերմեռանդութիւնը ցոյց տուեց, որով մեր ուղևորութիւնը դէպի Հաղարծին նա դարձրեց մի քաղցր և գրաւիչ յուշիկներով լի ճանապարհորդութիւն:

Գիշերային ցուրտը աստիճանաբար սաստկանում էր. մենք բոլորս վերարկուներով և շալերով ծածկված պառկել էինք, բայց այդ արտասովոր պայմաններում ոչ ոքի քունը չէր տանում: Մէկը մեզանից առաջարկեց մեր թախտերի առաջ խարոյկ վառել օդը քիչ թէ շատ ջերմացնելու համար:

— Դա կը լինէր և անտառի ջանավարներին վանելու մի միջոց,—սրախօսեց միւսը:

Վանահօր ասելով, մեր գալուց մի շաբաթ առաջ մի արջ, գոմէշի մեծութեան, մտնում է վանքի բանջարանոցը և կարտոֆէլը տակն ու վրա է անում. ոչ շների կատաղի հաչոցը, ոչ էլ վանքի բանւորների «հարայը» չեն կարողանում փախցնել գազանին. նա միայն այն ժամանակն է փախչում դէպի անտառը, երբ վանքի պահապանը սկսում է հրացանից կրակել:

Մեր լսածը Հաղարծնի ջանավարների համարձակութեան մասին որոշ տպաւորութիւն է թողնում մի քանիների վրա և նրանք ամբողջ գիշերը չեն քնում, սպասելով այդ անկոչ հիւրերի գալուն...

Երկինքը վառվել էր միլիոնաւոր պայծառն աստղերով, սարերի եռակից բարձրացող լուսնի շողերը աւետում էին լուսավաղչդի մօտալուտ երևալը. և իրօք, պճնված նորահարսի նման լուսինը սահուն դուրս է պրծնում սարերի գագաթից և հանդիսանում մեր աչքերի առաջ իր երկնային գեղութեան փայլով. այդ մօմենտը գիշերային դիւթիչ տեսարան էր ներկայացնում: Վանքի ծառան բերից ցախի մեծ կապոց և ածելով մեր առաջ՝ վառեց. չոր փայտը ճաթճատելով իսկոյն բռնկվեց, բարձրացաւ կայծերի մի ամբողջ խուրձ. հրեղէն լեզուները ծուխի մէջ երևալով շուրջը սփռում էին պայծառ լոյս. ծառան թուշի թաւամազ փափախով հանգնած խարոյկի մօտ՝ նայում էր հրակին միապաղաղ հայեացքով. նրա թուխ, արևառ դէմքը, տեղ-տեղ ակօսած կնճռներով, լուսաւորված էր կրակի կարմրաւուն լոյսով. իբրև տեղական ուրոյն տիպ, կարօտ գեղարուեստական վրձինի ստեղծագործութեան, նա բեռնել էր իր վրա իմ ամբողջ ուշը. ես յիշեցի կովկասեան յայտնի նկարիչ Գրաչեվի թուշի տիպերը դէմքի գերազանց արտայայտիչ գծերով. որքան նմանութիւն:

Բացի ծառայից խարոյկի մօտ նստոտել էին օր. Շ—ը և պ. Մ.-ը, որոնք առանձին ուշադրութեամբ լսում էին նրա պատմածները Հաղարծնի արջերի և գայլերի մասին. ահ էր ընկել լսողների սիրտը այն արկածներից, որոնց հանդիպել էր կուսական անտառներում ընութեան այդ հարազատ զաւակը. կրակը իբրև գազանների ահաբեկող միջոց՝ չը մարեցինք ամբողջ գիշերը. ժամ՝ 2½-ը ընտրվեցին 51 լիբերալ, 62 ունիոնիստ, 7 բանւոր, 5 իրլանդացի: Լիբերալները շահեցին 4, ունիոնիստները 7 տեղ: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Կ. Պոլիս, 20 նոյեմբերի

Նոյեմբերի 18-ին Ուսկիւբի մօտերը կայարանում տեղի ունեցած պայթումը Բ. Դրան մէջ վերագրում են Մակեդոնիայում գործող բուլգարական հրոսակախմբին:

Բուլգարական սահմանին կից պայթեցրել են մի ուժանակի փամփուշտ, որից վնասվել են 5 մարդ:

«Թանինը» հրատարակել է մի շարք փաստաթղթեր, որ ձեռք են բերվել խուզարկութիւնների ժամանակ Մոնաստիրում և որոնցից երևում է՝ թէ Բուլգարիան ժամանակից է մակեդոնական անկարգութիւնների մէջ: Նրանց թւում կայ Ֆէրդինանդ Թագաւորի քարտուղար Դոբրովիչի նամակը 1903 թ. դեկտեմբերի 22-ից, հասցէագրված Մոնաստիրի բուլգարական կոմիտէին: Ֆէրդինանդի անունով Դոբրովիչը շնորհակալութիւն է յայտնում արտայայտած զգացմունքների համար և խորհուրդ է տալիս հաստատ և համբերող լինել. յայտնում է, որ Ֆէրդինանդը վշտացած է բուլգարների ծանր դրութիւնից և հոգ է տանում այդ դրութեան բարելաւման համար:

Պալատը առաջին իսկ ընթերցումով ընդունում է պատասխան ուղերձի նախագիծը: Մեծ վէճերը պարզում է կաբինէտի ծրագիրը և պնդում է՝ թէ ալբանական ապստամբութիւնը ըէակցիոն չէր, սեպարատիստական շարժում չէր, այլ արդասիք այն հնացած կացութեան, երբ զինված ժողովուրդը անհակառակելի կատարում էր անկուլտուրական բէգերի հրամանները: Բացի խաղաղացնելուց, ապստամբութեան դէմ սկսված կռիւը կատարվում էր ազգաբնակութեանը զինաթափ անելով ու երկաթուղագծեր և գլխոցներ կառուցանելով, յետոյ տարածվեց Մակեդոնիայի վրա, ուր յարուցեց մակեդոնացիների դժգոհութիւնը, յուզմունքը և փախուստ դէպի Բուլգարիա: Բուլգարիայի հետ համաձայնութիւն կապելով կարելի եղաւ փախստականներին վերադարձնել Մակեդոնիա և հանգստացնել, որի պատճառով այնտեղ վերացվեց պատերազմական դրութիւնը: Գաւառանում պարագլուխները նոյնպէս գրգռեցին ազգաբնակութեան, բայց այնտեղ աջողվում է խաղաղացնել ու զինաթափ անել ազգաբնակութիւնը: Եմէնում նոյնպէս իմամ Եահիա Սադիվրիսը սեփական շահերից դրդված նոյնպէս գրգռում է ժողովրդին, սակայն երկաթուղի կառուցանելով, բանակցութիւններով և զինւորական միջոցներով այնտեղ խաղաղութիւն կը հաստատվի:

Փոխառութեան հարցի վերաբերմամբ վէճերը հաւատացնում է, որ բանակցութիւնների անաջողութիւնը զուտ ֆինանսական է և չազդեց Ֆրանսիայի հետ ունեցած քաղաքական յարաբերութիւնների վրա, որոնք անփոփոխ մնում են բարեկամական: «Նոյն տեսակ շատ լաւ են մեր յարաբերութիւնները Անգլիայի հետ: Բոլոր լուրերը եռապետեան դաշնակցութեան հետ համաձայնութիւն կապելու մասին սխալ են: Բոլոր պետութիւնների հետ Թիւրքիան պահպանում է միատեսակ բարեկամական յարաբերութիւններ: Մեր զօրքի զարգացումը լուրեր յարուցեց՝ թէ նա ուղղված է մի քանի պետութիւնների դէմ, բայց դա ճիշդ չէ: Դէպի մնացած պետութիւնները յարաբերութիւնները նմանապէս բարեկամական են. գաղտնի նպատակներ մենք չունենք. քաղաքականութիւն վարում ենք բացարձակ. մեր յարաբերութիւնները Բումինիայի հետ աւելի սերտ դարձան. մեզ մօտեցրին առևտրական շահերը, սակայն զինւորական դաշինքի լուրերը բոլորովին սխալ են. այդ տեսակ դաշինք չը կայ: Միատեսակ լաւ յարաբերութեան մէջ ենք մենք Սերբիայի և Բուլգարիայի հետ: Յունաստանի հետ մենք կամենում ենք բարեկամ մնալ և հաւատում ենք, որ կրետական հարցի մէջ Յունաստանը չի խառնվի: Պարսկաստանը Թիւրքիայի հինաւուրց բարեկամն է. սահմանագլխներում ապրում են քօչւոր ցեղեր, որոնք մշտապէս թիւրիմացութիւնների տեղիք են տալիս: Մեր զօրքերը գրաւեցին նրանց զսպելու համար մի քանի շրջաններ, և եթէ ապացուցվի, որ այդ շրջանները պարսկական են, այն դէպքում Թիւրքիան իր զօրքերը յետ կը կանչէ Պարսկաստանից»:

Արմատական Բիզա-Թէվֆիկը, քննադատելով ծրագիրը, ասում է. «Մեր կառավարութիւնը Եւրոպայի ընդհանուր ծիծաղի առարկայ է. նա չունի տրամաբանութիւն, չունի գործողութիւնների հիմունքներ: Նա ընկնում է պատէ-պատ, երբեմն կամենում է Կրետէն գրաւել, երբեմն էլ՝ Պարսկաստանի մի մասը»:

«Ճիշդ չէ»—ընդհատում է նրան արտաքին գործերի մինիստրը:

Հռետորը շարունակում է. «Կառավարութիւնը կամ սրի է անցկացնում կամ ներում է ապստամբներին և ըստ էութեան գործում է նախկին ըէժիմի նման... Պատգամաւորներին կալանաւորում են առանց պատճառի: Պատգամաւոր Բիզանուրը չորս ամիս բանտատեց անմեղ բոլորովին, յետոյ արդար ճանաչվեց զինւորական դատարանի կողմից: Ամբաստանեալը ազատ արձակվեց: Ինչպէս տեսնում է, մենք ոչ մի բան չենք փոխել մեր ներքին քաղաքականութեան մէջ: Մենք ունենք մի քանի պարտականութիւններ, որոնք մենք պիտի կատարենք: Մենք ունենք մի քանի գաղտնի գործեր

ռանից։ Այդ տեսակ մինիստրությունը աւելի լաւ է թող հրաժարական տայ»։ (Ծափեր ձախից)։

Յոյն Կոմիտին և բոլգար Պավլովը, կշտամբելով կառավարութեան՝ թէ անկողմնապահ չէ վերաբերվում դէպի Մակեդոնիայի քրիստոնեաները, պատմում են յոյների և բոլգարների հալածանքների ու ջարդերի մանրամասնութիւնները, բողոքում են պատգամաւոր Ռիզանուրի ձերբակալութեան դէմ և պահանջում են կաբինէտից հրաժարվել։

Ուշ լինելու պատճառով վիճաբանութիւնների շարունակութիւնը յետաձգվում է երկուշաբթի օրվան։

(Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Սեվաստօպոլ, 20 Նոյեմբերի

Ծովային ժողովարանում, Սինոպեան ճակատամարտի 57-րդ տարեդարձի առիթով կայացաւ ճաշ։ Ծովապետ Բոստրէմը բաղդաւոր եղաւ ստանալով հետևեալ հեռագիրը.

Հաղորդեցէք Սեւ-ծովի նաւատորմի ծովային ընտանիքին Իմ ջերմագոյն սիրոյ եւ հպատակութեան զգացմունքների համար եւ Իմ հաւատը՝ թէ նրա ստում միշտ եւ հանապազ կը պահպանվեն Սեւ-ծովեան նախահայրերի պատգամները յօգուտ մեծ Ռուսաստանի եւ ի փառս նաւատորմի եւ Անդրէեվի դրօշակի։ ՆԻԿՈԼԱՅ

Օդագնացութեան դպրոցի բացման առիթով ստացվեց պատասխանը.

Շնորհակալ եմ օդագնացութեան դպրոցի դեկավարներին եւ սովորեցնողներին նրանց հպատակութեան զգացմանց համար։ Ձեռ կասկածում, որ նրանք պատրաստ են ամեն կերպ աշխատել հայրենի օդագնացութեան օգտին։ ՆԻԿՈԼԱՅ

—

Բակոնիլի, 21 Նոյեմբերի

Իշխանութիւնների ներկայութեամբ քաղաքային ինքնավարութեան տան ճակատին կպցրին տախտակ ի յիշատակ Կայսրի այցելութեան։ Ճառեր արտասանեցին քաղաքագլուխը և պրոֆեսոր Բոդանին։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 21 Նոյեմբերի

Տեղական ինտեսութեան գործերի համագումարի նստաշրջանը աւարտվելուց յետոյ կայացաւ բաւական մինիստրների խորհրդի նախագահի մօտ։ Հրաւիրվածների թւումն էին մինիստրների խորհրդի անդամները, Պետական Խորհրդի և Դումայի նախագահները, Խորհրդի և Դումայի անդամներից, տեղական ինտեսութեան գործերի համագումարի անդամները և բարձրաստիճան անձեր։

Ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցագրի վրա Վոլգայի և Կասպից ծովի փոթորիկների հասցրած վնասների առիթով Թագաւոր Կայսրը բարեհաճեց մակագրել.

Բաց թողնել 10,000 ր. անակնկալ պետական Ֆոնդից։ (Հ. Գ.)

—

Սուխում, 20 Նոյեմբերի

Դուման որոշեց միջնորդել կառուցելու երկաթուղագիծ Նովոսենսկի—Տուապսէ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 20 Նոյեմբերի

Սէյնա գետի ջուրը իջնում է։ Գաւառներից հաղորդում են, որ գետերը վարարում են։ Սուվէտերում երկու մարդ խեղդվել են։ Մթերքներ հասցնում են նաւակներով։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 20 Նոյեմբերի

Պատգամաւորների պալատում ֆինանսների մինիստրը բիւջետային ճառում 1911/12 թ.թ. եկամուտների յաւելումը ծախքերից հաշւում է 51½ միլիոն։ Զինուորական մինիստրութեան նախահաշիւը աւելացրած է 19,000,000, ծովայինը՝ 11,500,000. Նախահաշւից դուրս եկամուտները կազմում են 41,000,000։

Մինիստրը ժամանակ տվեց երկրի տնտեսական զարգացման վրա. երկաթուղային արդիւնաբերութիւնը ընդլայնվում է, նաւագնացութիւնը կենդանանում է, խնայողական գանձարաններին պահ տրված գումարները շատանում են։ (Հ. Գ.)

—

Բրիւսէլ, 20 Նոյեմբերի

Թագուհու առողջութիւնը լաւացաւ. երկրորդ բիւլետէնը չէ հրատարակվում։

(Հ. Գ.)

—

Բուդապէշտ, 20 Նոյեմբերի

Ֆինանսների մինիստրը պատասխանելով Պոլոնիին, չանաց ապացուցել, որ փոխառութիւնը աւելի պակաս շահաւէտ էր, քան այն, որպիսին մը-տադրութիւն կար կնքել Ֆրանսիայում։ Պոլոնին պնդեց, որ փոխառութիւնը կնքվի Գերմանիայում Բաշլիդի խմբակի օգնութեամբ, որովհետև անհրաժեշտ էր հնարաւորութիւն տալ այդ խմբակին հինգ միլիոն շահել կառավարութեանը ընտրական նպատակների համար նրա տուած փոխառութիւնը ծածկելու համար։ Այս յայտարարութիւնը դահլիճում բարձրացնում է մեծ աղմուկ։ Ֆինանսների մինիստրը և Լուկաչը փոխանակում են վիրաւորական դարձուածքներ։ Օպոզիցիան հեռանում է դահլիճից։

Մեծամասնութիւնը Լուկաչին օվացիա արեց։ (Հ. Գ.)

—

Վիեննա.—Քաղաքային ինքնավարութիւնը վճռեց փողոցներից մինը անուանել Լ. Տոլստոյի անունով։ («Ե.»)

—

Պետերբուրգ.—Գիտութեանց Ճեմարանը նախագծում է բանալ Կովկասում հնագիտական ինստիտուտ, որի հոգաբարձու ընտրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հեռագրով արդէն իր շնորհակալութիւնն է յայտնել ընտրութեան համար։ Գիտութեանց Ճեմարանը դիմեց Կովկասի Փոխարքային խնդրելով տալ իր եպիսկոպոսութիւնը այդ ինստիտուտի հաստատման վերաբերմամբ։

Կովկասում գիւղացիների պարտադիր կախման դրութիւնը աւարտելու նախագիծը հաւանութիւն է գտել Պետ. Դումայի մասնաժողովի կողմից։

«Земщина» լրագիրը պահանջում է լուրջ միջոցներ ձեռք առնել Ռուսաստանի մահմեդականների մէջ տարածված պանիսլամական շարժման դէմ։

«Русск. Знамя»-ն հաղորդում է, որ «Свѣтъ» լրագիրը ծախվել է նացիոնալիստներին։

(«Ե.»)

—

Պետերբուրգ.—«Земщина»-ն հաստատում է, իբր Ա. Գուչկովը կառավարութեանը պայման է դրել ստեղծել Պետական Խորհրդում մեծամասնութիւն, որ Դումայի օրինագծերի բեկման առաջն առնէ։ Ապա լրագիրը պնդում է, թէ Գուչկովը յայտնել է կառավարութեան, որ այն դէպքում, եթէ այդպիսի մեծամասնութիւն չը կազմվի, հոկտեմբերիստները սիստեմատիկ կերպով կը մերժեն կառավարական օրինագծերը։

Պետական Խորհրդի դատաստանական մասնաժողովը որոշեց քրիստոնեաներին իրաւունք չը տալ անցնել ոչ-քրիստոնէութեան։

Պետական Դումայի անդամ հոկտեմբերեան Գոլոսովը պատասխանատուութեան է ենթարկում 14 լրագիրների խմբագիրների նրա համար, որ նրանք մեղադրում են իրան երկրորդ Դումայի անդամ բժիշկ Կարամանէվի սպանութեան մէջ։ («Ե.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Ուրմիա, 20 Նոյեմբերի

Պարսկական զօրքերից փախան 300 ձիաւորներ։ Զումա մզկիթում բաստ են նստել 250 սարբազներ։ Գլխաւոր պատճառը—ռոճիկ չը ստանալն է։

(Հ. Գ.)

—

Բաշտ, 13 Նոյեմբերի

Բաղաքում խալերան մուտք է գործել և օրական մի երկու զոհեր է առնում, իսկ մեր պարսիկները խալերայի առաջն առնելու համար ամեն օր թաղիաներ են անում և իրանց գլուխները թակելով Աստուծոյ օգնութիւնն են հրաւիրում իրանց լաց ու կոծով։

Բաղաքային վարչութիւնը ինչքան էլ աշխատում է փողոցները մաքուր պահել, բայց ոչ մի փոփոխութիւն չէ նկատվում. նոյն կեղտոտ փողոցներն են։

Ամենավտանգաւորը փողոցում դրված ջրի ամաններն են, որոնցով շատ հեշտ կերպով վարակվում է ժողովուրդը խալերայով։ Այդ կեղտոտ ջուրը ամեն մի պարսիկ խմում է առանց իմանալու նրա միջի պարունակութիւնը։ Կառավարական բժիշկը, որ եկած է այստեղ, աւելի լաւ կանէր, եթէ արգելէր այդ ամանները այդ տեղերում դնելու, որով ժողովրդին փրկած կը լինէր մի մեծ վտանգից։ Զէզոք

Կ. ՊՕԼՍԻ ԴԷՊՔԵՐԸ

—

Թիւրքահայ պատրիարքի եւ ազգային վարչութեան հրաժարականների խնդիրը.

Կ. Պոլսից ստացված լրագիրների վերջին համարները մի քանի տեղեկութիւններ են հաղորդում ազգային այն ճգնաժամի մասին, որ առաջ է եկել այդտեղ Դուրեան պատրիարքի և ազգային վարչութեան հրաժարականների առիթով։

Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, Դուրեան պատրիարքը անկարող հանդիսանալով անկախ և ինքնուրոյն գործունէութիւն ունենալ, ընկաւ կողմակի ազդեցութիւնների տակ, և երբ վարչութեան ատենապետ դօքտոր Սեղբոսեանը գանակոծվեց, նա չը կամեցաւ դիմել արդարադատութեան և պատժել տալ յանցաւորին։ Կուսակցական յաւակնութեան կործանարար ձգտումները և պատրիարքի թուլութիւնը վերջ ի վերջոյ առաջ բերին անիշխանութիւն և կազմալուծումն ազգային բոլոր գործերի մէջ։ Պատրիարքը, խոստովանվելով իր անկարողութիւնը, իր հրաժարականը ներկայացրեց թէ պետութեան և թէ ազգային ժողովին։ Ազգային ժողովը չը կարողացաւ գումարվել, որովհետև երկիւղ կար, որ կուսակցականները պէտք է խուժանային ցոյցեր տարքեն և ստիպեն երեսփոխաններին համակերպել իրանց պահանջներին։ Հարց յարուցվեց գումարել ազգային ժողովը ստիկանական հսկողութեան ներքոյ։ Վերջապէս ժողովի նիստը նշանակվեց նոյեմբերի 5-ին։ Վերջին թերթերը յայտնում են, որ մինչ այդ կայացել էր մի տեսակ համաձայնութիւն ազգային ժողովի խմբակցութեան և դաշնակցականների միջև, միջնորդութեամբ Գր. Զոհրաբի։ Այդ համաձայնութեան հետևանքով որոշված է. 1) ընդունել Դուրեան պատրիարքի և ազգային վարչութեան հրաժարականները, 2) պատրիարքական տեղապահ նշանակել Արշարունի եպիսկոպոսին, որ առաջ ևս վարել է տեղապահի պաշտօն։

Իբրև հաւանական թեկնածու պատրիարքութեան, «Ժամանակ» թերթի գրելով, նկատված է Անդօրայի առաջնորդ Բարգէն Կիւլէսերեանը, որ նորերս եպիսկոպոս ձեռնադրվեց և մեզ մօտ հիւր էր Թիֆլիսում։ Իսկ իբրև ազգային ժողովի ատենապետ թեկնածու է ներկայացված Յարութիւն էֆ. Մօստիչեան և վարչութեան ատենապետ Վռամշապուհ էֆ. Մանուկեան։

Ազգային ժողովը թէև գումարվել է նոյեմբ. 5-ին, բայց կուսակցականների և նրանց ընդդիմադիր խմբերի մէջ տեղի ունեցած տաք վիճաբանութիւնները թոյլ չեն տուել, որ ժողովը զբաղվի հրաժարականների խնդրով և այդ խնդիրը ու պատրիարքական տեղապահ նշանակումը յետաձգվել է յաջորդ նիստին, այն է նոյեմբերի 12-ին։

Եթէ, արդարև, ազգային ժողովին աջողվի պատրիարքական փոխանորդ ընտրել Արշարունի եպիսկոպոսին, պատրիարք՝ Բարգէն եպիսկոպոսին, ատենապետ՝ Մօստիչեանին և վարչապետ՝ Մանուկեանին, այդ ակտերով կուսակցականների գործունէութեանը Թիւրքիայի հայոց ազգային կեանքում՝ ծանր հարուած հասցված կը լինի և գուցէ խաղաղութեան և խաղաղ զարգացման այնքան կարօտ խեղճ թիւրքահայ ժողովուրդը ազատվի իրան խեղդող կուսակցական բռնապետութիւնից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ

—

Թիֆլիսում բացվեց մի նոր ընկերութիւն ևս։

Դա բնագիտական ընկերութիւնն է։

Նա հանդէս է գալիս, իբրև առաջին զուտ գիտական ընկերութիւնը մեզանում։

Նա բացվել է կանանց բարձրագոյն կուրսերին կից և նպատակ ունի ընդարձակ ծրագրով գործել բնագիտութեան և նրան ուղեկից գիտութիւնների ասպարէզում։

Բացումը տեղի ունեցաւ շաբաթ, նոյեմբերի 20-ին, կանանց կուրսերի լսարանները։

Պրոֆեսոր Կ. Խարիչկով մի ամփոփ ճառով բացատրեց նոր բացվող ընկերութեան նշանակութիւնը։

Ներկայ եղողներից բաւական անձեր անդամագրվեցին նոր ընկերութեան, որից յետոյ տեղի ունեցաւ առաջին ընդհանուր ժողովը։

Նախագահ ընտրվեց պրոֆէսոր Խարիչկով, փոխ-նախագահ պրոֆ. Կազանցեվ, քարտուղար Լեմլէյն, անդամներ Բարաչ, Սողոմոնեան. կանդիդատներ՝ Ամբարդանեան, Բալանթար, Կոնիեվ։

Այնուհետև դ-ր Դիրը կարդաց մի զեկուցում Դաղստանի ազգագրական ուսումնասիրութիւնների մասին։ Զեկուցանողը, հաղորդելով մի քանի աշխարհագրական տեղեկութիւններ լեռնական ցեղերի դասաւորութեան մասին, կանգ առաւ այն հարցի վրա թէ ինչպէս պէտք է բացատրել սահմանափակ շրջանի լեզուների այնքան մեծ բազմազանութիւնը Դաղստանում և յայտնեց այն միտքը, որ լեզուների բազմութեան պատճառներից մէկը ևս համարում է երեալը, որոնք չէին կարող հարազատութեամբ իւրացնել տեղական լեզուն։

Ա. Բալանթար ընդունելով Դիրի բացատրութեան հաւանակութիւնը մի քանի դէպքերում, աւելի հիմնաւոր համարեց ցեղագրական, տոհմագրական, հասարակագիտական ազդեցութիւնները և ցոյց տուեց, որ օրինակ Ուրարտուի պետերի բազմութիւնը, հին աւանդական իշխանութիւնների ինքնուրոյն և կղզիացած կեանքը, շաղկապված աւանդութիւնների ոյժի հետ, ստեղծել է տարբերութիւններ նոյն իսկ մի ազգի մասերի մէջ և առաջ բերել բազմաթիւ բարբառներ։

Մի երկու փոքրիկ նկատողութիւններից յետոյ զեկուցանողը տուեց իր բացատրութիւնները։

Միւս զեկուցումները յետաձգվեցին հետևեալ ընդհանուր ժողովին։

Ա. Բալանթար զեկուցելով, որ առաջիկայ հինգշաբթի օր, նոյեմբերի 25-ին, Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. Ընկ. նախաձեռնութեամբ հրաւիրված է մի միացեալ խորհրդակցութիւն քննելու մեղուների փտախտի և դաշտավնների ոչնչացման խնդիրները, դիմեց ժողովին, խնդրելով ընտրել մի քանի անձ ներկայ լինելու այդ խորհրդակցութեան։

Ժողովի կողմից անուանվեցին պրոֆ. Կազանցեվ, Բարաչ, Իւզբաշեան, Սողոմոնեան և ուրիշ ցանկացողներ։

Ընդհանուր ժողովի փակվելուց յետոյ տեղի ունեցաւ նորակազմ խորհրդի առաջին նիստը, որին ներկայ էին թէ անդամները և թէ փոխանդամները։

Որոշվեց ընդհանուր ժողովի հետևեալ նիստը հրաւիրել դեկտեմբերի 3-ին, ուրբաթ օրը։ Իսկ մինչև ժողովի պարապմունքների բացվելը կազմել խորհրդի նիստ։

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Շաբաթ օրը նոյեմբերի 20 ին, Թիֆլիսում մի քանի տեղ դասախօսութիւններ կայացան ի յիշատակ Լ. Տօլստոյի։

Հասարակական կլուբում Երմոլաէվ, Յովհաննիսեան դասախօսութիւններ կարդացին. օր. Դոլուխանեան և մի պարոն Տօլստոյի գրուածներից ընթերցումներ արեցին։

Յովանեան օր. դպրոցում երէկ. ժամը 5-ին կայացաւ մի գրական հանդէս, որին ներկայ էին 6 րդ և 7-րդ դասարանի աշակերտուհիները հոգաբարձութեան անդամները և ուրիշներ։ Ռուսաց լեզուի ուսուցիչ Լ. Մելիք-Օհանջանեան ծանօթացնելով Լ. Տօլստոյի կենսագրութեան հետ, բացատրեց նրա նշանակութիւնը և նրա վարդապետութեան էական կէտերը։ Պատմութեան ուսուցիչ Մալխասեան նոյնպէս մի ամփոփ ճառ արտասանեց Լ. Տօլստոյի գրական գեղարուեստական և փիլիսոփայական նշանակութեան մասին։

Արքունական թատրոնում դասախօսութիւններ կարդացին պրոֆ. Ժուրակովսկի և ժուրնալիստ Նակաշիձէ։ Վերջինս պատմեց իր այցելութեան մասին, որ արել է Տօլստոյին մի քանի տարի սրանից առաջ։

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ 1911 ԹՎԻ ԵԼԵՄՈՒՏԸ

—

Ընդամենը մուտք հաշւած է 2.213,772 ր., որ ստացվելու է հետևեալ կերպով։

1) Անշարժ կայքերից 827,274 բուբլի

2) Առևտրից ու արդիւնաբերութիւնից 138,490 բուբլի։

3) Ձիերից և մասնաւոր մարդկանց կառքերից, շներից։ հեծանիւներից, գոմէշներից, եղներից և այլն 35,890 ր.։

4) Զանազան անուան մաքս 14,918 ր.։

5) Քաղաքային կալուածքներից և օբրոչների եկամուտներից 142,253 բուբլի։

6) Քաղաքային ձեռնարկութիւններից (Ջրանցք, սպանդանոց, էլեքտրաքարշի խոկոսիք, բժշկա-սանիտարական հաստատութիւններ և այլն) 729,280 ր.։

7) Պետական գանձատնից քաղաքին հատուցելիք նպաստը, լոմբարդ, քաղ. բուժարաններ և հիւանդանոցներ՝ 241,917 ր.։

8) Զանազան հատոյթներ՝ 83,740 ր.։

1909 թվին իսկապէս ստացվեց 1.996,248 ր. 72 կ.։

1910 թվին ստացվելու նշանակված է 2.138,327 ր.։

Դեֆիցիտ կը մնայ դալիք տարի մօտ 400,000 բուբլի։

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՐՀԱՒԻՐԲԸ ԿՐԱՍՆՕՎՈԴՈՒՄԿՈՒՄ

—

Կրասնօվոդսկ, 15 Նոյեմբերի

Զատկից մինչև այսօր անձրևի երես չենք տեսել։ Այդ երկարաւաւ երաշտից յետոյ, ամսիս 13-ին, առաւօտ. ժամը 5-ից սկսած Կրասնօվոդսկի սովորական ցուրտ և յաճախակի կրկնվող քամին երեկոյեան ժամը 6-ին անսպասելի կերպով սաստկացաւ և սկսեց աւազախառն փոշի փչել, այնպէս սաստիկ, որ մարդիկ բոլորն էլ ստիպված եղան խանութները փակել և իրանց բնակարաններում պատսպարվել։ Սակայն բնակարաններում ևս հանգստութիւն չը կար, լուսամուտներից և դռներից ներս թափանցող փոշին ծխի նման խեղդում էր մարդկանց. կառքերի երթևեկութիւնը և երկաթուղու գնացքը դադարեցված էր. այդ դրութեան մէջ էլ լուսացաւ կիրակին։ Առաւօտից մինչև երեկոյ արեգակը և երկինքը ծածկված էին մեզանից. միայն առաջինի լոյսը փոշիախառն աւազի հետ շառագունել էր և օդը-երկինքը մեր առաջներկայանում էր որպէս հրդեհախառն մառախուղ. 20 քայլից հեռուն ոչինչ չէր երեւում, նոյն իսկ մեծ շինութիւններն անգամ աննկատելի էին։ Մարդիկ սարսափած եղած տներից դուրս չէին գալիս, փակել էին դուռ և լուսամուտ, ճրագը վառել և վառարանի կողքին բազմել, իսկ փոշին բոլոր տներում ծխի պէս քուլա-քուլա էր անում, երբ դուռը կամ լուսամուտի փեղկերը բացվում էին, դուրսը երևում էր որպէս հրդեհ, այնպէս որ հեռուից դիտողը գուցէ և կարծէր, որ ամբողջ Կրասնօվոդսկում իր շրջապատ լեռներով ու անապատներով հրդեհ է բռնկվել։

Սարսափելի տեսարան էր ստեղծվել մեզանում։

Ջրկիրները ջուր չէին բաժանում այդ օրը, շատերը ստիպված էին առանց ջրի մնալ։ Էլեքտրական լոյսերը բոլորովին հանգցված էին, քաղաքում լուսաւորութիւն չը կար, շատ խանութների թիթեղեայ ցուցանակները քամին տարել և աւազի մէջ հետքն էր կորցրել։ փողոցներում անցուդարձը բոլորովին կտրված էր. և ոչինչ չէր լսվում, բացի քամու ուժեղ վզոցից և ոռոփիկանների սուլոցից։ Շատ տների փայտեայ ցանկապատները և «Նոր-քաղաք» կոչված քաղաքամասի փայտեայ անկիներից քամին կոտրատել և ոչնչացրել էր մի երկու տների թիթեղեայ կտուրները թոցրել և փողոցի մէջն էր ձգել։

Մէկ մարդ, ազգով ռուս, իր ընտանիքի հետ տուն գնալիս շեղվել էր իր ընտանիքից և ճանապարհից. երկրորդ օրը գտնում են փողոցի մէջ սառած և մահացած, ոմանք ասում են, որ հարբած է եղել։

Սարսափելի կերպով յուզված էր և ծովը։ Նաւերի գնացքը դադարեցված էր. ափերի մօտ գտնվող նաւակներից շատերը միմեանց դիպչելով ջարդ ու փշրւք են եղել, շատերը խորտակվել են, փչացել է մեծ քանակութեամբ ալիւր և այլ ապրանքներ. ափից հեռու ծովի մէջ մի նաւակ, որ ճանապարհվել էր դէպի Զէբիշլեաբ, խորտակվել է, իսկ միջում գտնվող 3—4 թիւրքմէններ լողալով դուրս են եկել ափը անվնաս... Նաւակներից շատերը թիւրքմէններին է պատկանում, որոնք այստեղից ալիւր և այլ ապրանքներ են փոխադրում Ղզըլ-Սու կոչված նեղ թերակղզին (որը ընկած է Կասպից ծովի մէջ Կրասնօվոդսկից դէպի հարաւ արևմուտք և որտեղ կան 6—7 ձրկնարդիւնաբերական աշխատանոցներ), իսկ այնտեղից էլ ձուկն են բերում Կրասնօվոդսկ... Այն ձկնորսներից, որոնք քամին սկսելուց ծովի մէջն են եղել, նրանցից դեռ ոչ մի տեղեկութիւն չը կայ. յայտնի չէ թէ որ կողմն է քշել քամին...։

Այսօր, ամսիս 15-ին, գիշերվայ ժամը 1-ին եղանակը փոխվեց և սկսեց փչել ձիւնախառն քամի. առաւօտեան քամին որոշ չափով մեղմացել էր և գետինը ծածկված էր ձիւնով. խանութները բացվեցին. քաղաք իրարանցման մէջ ընկաւ. առաւօտեան ժամը 7-ին «Նոր-քաղաք» կոչված քաղաքամասում հրդեհի բռնվեց Աւազեանի փայտեայ շինութիւնը, որը կարելի եղաւ շուտ հանգցնել, շնորհիւ խանութպանների գործ դրած ջանքերին... Որպէսզի շրջակայ տները ևս չը բռնկվէին հրդեհից, ամբողջ տան չորս կողմը քանդեցին... հրդեհաշէջներ չը կային, „Пожарное депо"-ն անունով միայն գոյութիւն ունի, ջրկիրներ ևս չը կային։ Դէպքի վայրն եկաւ պրիստաւը մի քանի ոստիկաններով. զինուորները եկան 1 ժամից յետոյ, որ արդէն ուշ էր... «Կավկազ-Մերկուրի» ընկերութեան պատկանող „Вел. Кн. Константинъ" նաւը, որ տեղից ճանապարհվել էր դէպի Բաքու, ամսիս 13 ին, ցերեկվայ ժամը 4-ին, գնալով մինչև 18 վերստ հեռաւորութիւն, կանգ էր առել, շնորհիւ ծովի սաստիկ ալէկոծման, որ ոչ մի կողմ հնարաւորութիւն չէ եղել գնալու՝ ոչ առաջ և ոչ էլ յետ, որի պատճառով նաւի հրամանատարը հրամայել է խարիսխները բաց թողնել և սպասել մինչև որ քամին և ծովի ալէկոծումը կը հանդարտվի։

Եւ ահա այսօր, ամսիս 15-ին, առաւ. ժամը մանակ առ ժամանակ վանքի երեք պահապան շները՝ անտառի կողմից լսվող թեթև շշնջիւնից հաչելով սլաքի արագութեամբ վազում էին դէպի ձորը. նրանց ոռնոցը և մոլի հաչոցը գիշերային խոր լռութեան մէջ սարսուռ ազդող տպաւորութիւն էին թողնում. մենք զգում էինք, որ վանքի շրջապատին մի որևէ գազան է մօտեցել...

Այդպէս մենք անցուցինք այդ գիշերը Հազարծնում։ Անմոռանալի գիշեր իր տպաւորիչ յուշիկներով։

Արևը նոր էր ծագել, երբ տաճարի ներսից լսվեց առաւօտեան ժամերգութիւնը. մենք քնհատ հաչէչ վերկացանք և ուղղեցինք մեր քայլերը դէպի վանքի աղբիւրի աւազանը թարժանալու. ժամ ասողը վանահայրն էր Ոսկերչեանի սպասաւորութեամբ։ Այստեղ, ժամածում էի ես, այս տաճարի բարձր կամարների տակ դարեր առաջ հնչվում էր և Տարօնեցու ձայնը, այստեղ հնչվեց առաջին անգամ «Խորհուրդ խորին...»։ Ի՞նչ մնաց այն հեռաւոր ժամանակից... միայն այս տաճարները, իբրև մեր նախնեաց մտաւոր հանճարի վիթխարի արձաններ. իսկ ո՞ւր են այն մարդիկ, որոնք ճգնել են այս կապուտակ ջինջ երկնքի տակ՝ միացած Աստուծոյ և բնութեան հետ... թուրքական անեղը անապատում նրանք փոշիացել, անհետացել են իրանց ամբողջ կեանքով, կրած տանջանքներով, սրտի խորին յոյզերով, մաքի խիզախ թռիչքներով։

***

Տուն վերադառնալու ժամը արդէն մօտեցել էր. մենք Մ.-ների հետ վերջին պատյանը արինք Հաղարծնի շուրջը. մագլցելով բարձրացանք մօտակայ սարի գագաթը, որտեղից բացվում է հրաշալի լեռնային տեսարան։ Ամբողջ սարահարթը ծածկված էր ալպեան հարուստ բուսականութեամբ և գոյնզգոյն ծաղիկներով, որոնք տեղ-տեղ կատարելապէս նախշուն գորգի տպաւորութիւն էին թողնում։

Այդ կարճատև պտոյտը անելուց յետոյ մենք վերադարձանք և ապա դարսելով մեր բոլոր իրերը սայլերի վրա վերջին հրաժեշտը տուինք վանքին։

Երկու օր մնալով Հաղարծնի հմայիչ բնութեան գրկում, ինձ ծանր էր բաժանվել այդ տեղերից, ուր քաղաքի ունայն կեանքից յոգնած սիրտը կարող է միշտ գտնել և հանգիստ, և մխիթարութիւն։

Արեգակը իր սովորական շրջանը անելով մօտեցել էր սարերի գագաթին, արձակելով իր վերջին պայծառ ճառագայթները։ Հեռանալով մենք կրկին նայեցինք մենաստանի կողմը, որը քառորդ ժամից յետոյ իսպառ անհետացաւ մեր աչքերից։

Ց. Սպենդիարեան

ԳԻՇԵՐՎԱՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Գիշերվայ ժամերգութիւնը կատարվեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի տաճարում։ Ներկայ էին Գրիգորեան հոգեւորականներ։ Ժամերգութեան

Ֆիքիլով հայ հասարակական գործիչ է։ Ծնվել է 1814-ին Սալդուզ գավառի Ղարաղիլիսա գյուղում։ Ավարտել է Ներսիսյան դպրոցը։ Հանդես է եկել հոդվածներով։ Մեծ դեր է խաղացել Ռուսաստանում գրաքննության մեղմացման գործում։ Հրատարակել է «Ամսագիր ազգաբնակ հայոց» ամսագիրը։ Մահացել է 1883-ին։

ՑԱՌՈՎՍԵՎԱԿ ՆՈՎՈՒԹՅՈՒՆ

Հ. Ջ.

Ոչ-ոչ մեր մամուլի մեջ հանդիպում ենք հոդվածներ, որոնք գրվում են ինչպես հանրությունը հետաքրքրող հարցերի մասին, բայց գրվածքի հեղինակը ոչ մի տեղեկություն չունի գրվելիք հարցի մասին։ Ինչպես ասում է ռուսերեն մի հայտնի ասացվածք, «Ինչ-որ բան գրել է, բայց ոչ ոքի չի հարցրել»։ Ինչպիսի՞ հարցեր են դրանք։ Դրանք հարցեր են, որոնք գրվում են

լու հարցի մասին։ Մասնաժողովը քննելով համեմատական դները, որոշեց էլեքտրական կայարանի կարգ ու սարքի գործը յանձնել Նոբէլի գործարանին, որ առաջարկել էր ամենապակաս վճարը (149,000 ր.) իսկ մնացած 19 ֆիրմաներին մերժեց։

◆ «Кавк. Хозяйство» թերթի խմբագրութիւնը ուղարկեց հետեւեալ շնորհաւորական հեռագիրը Պետերբուրգի «Сельскій Хозяинъ» գիւղատնտեսական թերթի գոյութեան 25-ամեակի առիթով. «Կ. Х.»-ի խմբագրութիւնը ողջունում է իր աշխատակցի յօբիլեանը։ Գիւղատնտեսութեան շահերը աստիճանաբար ձեռք են բերում իրանց իրաւունքները։ Հաւատով ենք նայում ընդհանուր գործի ապագային»։

◆ Քաղաքային տնտեսական մասնաժողովը հնարաւոր գտաւ խոզի մսի ֆունտը պակասեցնել մի կոպէկով։

◆ Պրօֆէսոր Կապուստինը վերջնականապէս հրաժարվել է Պետական Դումայի նախագահի օգնականի պաշտօնից։

◆ Բագուի քաղաքապետը հրատարակել է պարտադիր որոշում, որի համաձայն արգելվում է ամեն տեսակ զրգռիչ ճառեր կամ գրուածքներ տարածել ազգաբնակութեան մէջ, գովաբանել հրապարակօրէն կամ մամուլի մէջ հասարակական անկարգութիւնները, յուզմունքները, ցոյցերը և հասարակական հանգստութիւնն ու ապահովութիւնը խախտող գործողութիւնները։ Ծանցաւորները ենթարկվում են 3 ամսով բանտարկութեան կամ մինչև 3000 ր. տուգանքի։

◆ Օրուջ Օրուջէվը խնդրամատոյց է եղել Բագուի քաղաքապետին՝ թոյլ տալ հրատարակել Բագուում հասարակական-քաղաքական մի թերթ ռուսերէն, «Востокъ» (Արևելք) անունով։

◆ Բագուում այս ամսի 30-ին կը բացվի նաւթարդիւնաբերողների XXIX-րդ հերթական համագումարը Ինժեներ Ռուդէվիչի նախագահութեամբ։

◆ Զեռնարկված է Բագուում էլեքտրաքարշ կառուցելու նախապատրաստական աշխատանքներին։

◆ Գանձակի քաղաքային դուման որոշել է Լ. Ն. Տոլստոյի յիշատակը յաւերժացնելու համար քաղաքում բանալ մի դպրոց նրա անունով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Նոյեմբերի 21-ին շուրջկալի ժամանակ ոստիկանական պաշտօնեաները կալանաւորեցին V քաղաքամասում 28, VII-ում 385, VIII-ում 40 և XIII-ում հոգու։ Միևնոյն օրը գինւորական պահակախմբի և ոստիկանների ձեռքով կալանաւորվեցին V-ում 10, IX-ում 65 և XII-ում 5 անգործ և անանցագրեալ մարդիկ։

◆ Նոյեմբերի 20-ին, առաւօտեան, կառքի մէջ յանկարծամահ եղաւ Թիֆլիս եկած Սքզէր Իբրահիմ-օղլին, 60 տարեկան։

◆ Վերջերս քաղաքում շատացել են հրդեհները, որոնց պատճառը գլխաւորապէս վառարանները շատ վառելն է լինում։

◆ Ոստիկանապետը կարգադրել է հսկել փայտավաճառների վրա, որոնք վերջին ժամանակներս սկսել են փայտը վաճառել կեղծ չափերով։

◆ Նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, Վիննի վերելքում անյայտ մարդիկ ատրճանակով սպանեցին փողոցով անցնող Ալիբէկ Իսկանդարեանին (Սերգօ), 35 տարեկան, առանց որոշ պարապմունքի։ Մարդասպանները փախան։

◆ Լեռնային ինժենէր Հմայեակ Վահանեանը, որ ապրում է Ալէքսանդրօվսկայա փող. № 3 տանը, յայտնեց ոստիկանութեան, որ երկու օր առաջ նրա բնակարանից, նրա բացակայութեան ժամանակ, անյայտ անձեր գողացել են 185 ր. զանազան շորեր։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Կիրակի, նոյեմբերի 21-ին, յայտնի դերասանուհի Նինա Զխէիձէի և տաղանդաւոր դերասան Լազո Մէսխիեվի մասնակցութեամբ, Վրաց Դերասանական խումբը խաղաց Սուվբատովի «Դաւաճանութիւն» 5 գործ. պատմական դրաման, վրաց ազնուականների թատրոնում։ Սուլէյման խանի դերը խաղաց Մէսխիեվը, իսկ Զէյնաբինը՝ Զխէիձէն։

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։

Նոյեմբերի 25-ին և յիշատակ Լ. Տոլստոյի կը խաղացվի նրա «Խաւարի թագաւորութիւն» 5 գործ. պիէսը։

Ներկայացման սկզբում կը կարդացվի մի բէֆէքտաս, իսկ վերջում տեղի կունենայ ապօթէօզ։

Ն. Զխէիձէն Թիֆլիս է եկել մի քանի ներկայացումների մասնակցելու համար։

◆ «Մշակի» № 258-ում հաղորդել էինք, որ վրաց մի քանի գրողներ և հասարակական գործիչներ, Կովկասի բարձր իշխանութեան կարգադրութեամբ աքսորվում են Կովկասեան երկրի սահմաններից դուրս։

Այժմ վրաց թերթերը հաղորդում են լրացուցիչ տեղեկութիւններ։ Վրաց գիմնազիայի ուսուցիչ և «Էրի» շաբաթաթերթի խմբագիր Պէտրէ Սուրգուլաձէն, Ալ. Զաքարիին, բժ. Ալ. Դիասամիձէն, երիտասարդ գրող Միխայիլ Ադամաշվիլին, Շաքրօ Բիլանաշվիլին, նախկին «Դրօէբա» թերթի բէպարտեօր Քաիխոսրօ Քավթարաձէն, Միխայիլ Խուցիշվիլին, «Դրօէբա» թերթի խմբագիր Իլիա Աղլաձէն (1 տ. 2 ամիս բանտ նստելուց յետոյ), Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան վարչութեան քարտուղար և բանաստեղծ Սամսոն Փիրցխալավան ու գրող Գիօրգի Լասխիշվիլին աքսորվում են Կովկասից այլ և այլ ժամանակամիջոցներով, սկսած 5 տարուց մինչև 2 տարի։

Սրանցից մի քանիսը, այն է Ս. Փիրցխալավան, Գ. Լասխիշվիլին և Բ. Քավթարաձէն, Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան գլխաւոր վարչութեան նախագահ գեներալ Գ. Ղազբէգի ե-բաշխաւորութեամբ բանտից ազատ արձակվեցին։

Բանտարկվածներից պատսկահպատակ Կ. Օնիկաշվիլին աքսորվում է Պարսկաստան (վերջինս Սպահանի մօտերքում ապրող մահմեդական վրացիներից է, որոնք գաղթեցվել են Պարսկաստան Շահ-Աբբասի ժամանակ և Թիֆլիս էր եկել վրաց լեզուն ու գրականութիւնը ուսումնասիրելու համար)։

Վերոյիշեալ բոլոր անձինք պիտի հեռանան Կովկասի սահմաններից երկու շաբաթվայ ընթացքում։

◆ «Սաքմէ» թերթի խմբագրութեան խուզարկման և աշխատակիցների երկօրեայ ձերբակալման պատճառով, վերոյիշեալ լրագիրը լոյս չը տեսաւ ամսիս 19-ին և 20-ին։ Նոյեմբերի 21-ից թերթը նորից սկսեց լոյս տեսնել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, 7 նոյեմբերի

Հասկանալի է թէ ինչ նշանակութիւն ունի ապագայ սերնդի համար պահպանութիւնը այն ամենի, ինչ որ գրվել է Լ. Տոլստոյի կեանքի վերջին օրերի մասին և նրա մահի առիթով։

Ուստի Լ. Տոլստոյի անուան Պետերբուրգում առնւ-թանգարան շինելու ընկերութեան խորհուրդը, որ պատրաստվում է մօտ ապագայում բանալ ժամանակաւոր թանգարան, դիմում է խնդրելով Ռուսաստանի բոլոր պարբերական թերթերի խմբագրութիւններին խնդրելով ուղարկելու ընկերութեան խորհրդին (նրա քարտուղարի անունով Рождественская ул. д. № 18, кв. 37, В. Я. Муринову) մի-մի օրինակ լրագիրների և ամսագիրների այն համարները, որոնց մէջ զետեղված են տեղեկութիւններ Լ. Տոլստոյի վերջին օրերի և մահի մասին։

Խնդրում ենք միւս խմբագրութիւններից արտատպել ներկայ նամակը։

Խորհրդի փոխ-նախագահ՝ Մ. Ա. Սատխովիչ
Քարտուղար՝ Վլ. Մուրինով

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդ մնում են 10 հոգի։

Մինչդի կարգադրութեամբ այս տարի քննութեան են ենթարկվելու Զերնիգովի, Բեսարաբիայի, Նովգորոդի, Տաբօսլավլի նահանգների և Դոնեան շրջանի հոգևոր կրթական հաստատութիւնները։

Բժշկական մարմինը գտաւ, որ հիմք չը կայ արգելել ժանտախտից վտանգաւոր տեղերում երկաթուղիներով փոխադրել կենդանի ձուկ արկղներով և ձուկ սառոյցի մէջ։

Երդուեալ-դատաւորներն արդարացրին Լեվ Լվովիչ Տոլստոյին իր հօր «Ոչ թէ ոյժի, այլ ճշմարտութեան մէջ է Աստուած» գրքոյկը հրատարակելու համար։

Ուղղափառ եկեղեցու մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որով 232,000 ր. է յատկացվում հոգևոր-կրթական հաստատութիւնների ծառայողների ռոճիկները աւելացնելու համար։

ՕԴԵՍՍԱ։ Մի շաբաթում ժանտախտով հիւանդացաւ ու մեռաւ 1, առողջացան 2, մնում են 8 հոգի։

ՀՌՕՄ։ Ինժենէր Կամմարօտան և զինւոր Կաստէլանին բարձրացան մեծ տարածութիւն։ Գործիքն ընկաւ. Կամմարօտան մերձիմահ հասցվեց հիւանդանոց։

ՍՕՖԻԱ։ Վարնան յայտարարվում է խօլերայից անվտանգ։

ՄԱԴՐԻԴ։ Բավադիայում ջրի պատճառով երկաթուղին դուրս եկաւ գծից. երեք մարդ սպանվեցին։

ԼԱՆԴՎԱՐՕՎՕ։ Բուդդիշկում 5 դիմափոխված չարագործներ, կապկպելով փայտեղէն արդիւնաբերող Կուբիցկիի ընտանիքին, յափշտակեցին 11,000 ր. և գոհարազարդ իրեր. վերջում կողոպտիչների դեկավարը կալանաւորվեց։

21 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացաւ 1, մնում են 11 հոգի։

ՍԼՕԲՕԴՍԿՕԷ։ 4 զինված մարդիկ ներս մտան Գլատունովի գործարանը և յափշտակեցին 3,000 ռուբլի։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Բօրային կոմիտէտը ժողովեց 7,000 ր. հեղեղից ջնջված լուղորդների օգտին։

ԽԱՐԲԻՆ։ Տեղի ունեցաւ ռուս-չինական առևտրա-արդիւնաբերական թանգարանի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Պաշտօնական անձանց թուում ընտրվեցին բանկերի, Ցինդէլի և Մօրոզովի ֆիրմաների և ուրիշ հաստատութիւնների ներկայացուցիչներ։

ՏԱՇԿԵՆՏ։ Կամպօ Սրցիպիօն թռաւ 20 րօպէ 300 մետր բարձրութեան վրա։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ։ Գաբէր-Վօլինսկին 14 րօպէ թռաւ 400 մետր բարձրութեան վրա։

ՖՐԻԴՐԻԽՍՀԱՖԷՆ։ Լրտեսութեան մէջ կասկածվելով ձերբակալվեց Ֆրանսիացի կապիտան Լիւկսը։

ԲԵՐԼԻՆ։ Հրատարակվեցին կանոններ, որոնցով արգելվում է օդագնացներին թռչել ամրութիւնների վրա և շուրջը՝ 10 կիլոմետր շրջանի մէջ, առանց իշխանութիւնների թոյլտուութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բերանի, կոկորդի
հիւանդութիւններ
Ընդունելութիւն (Առաւօտեան 9—1 ժամը.
(Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—11

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ, և ԶՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ
Ընդունել. ամեն օր (Առաւօտ. ժ. 9—12
(Երեկոյ. ժ. 5—7
(Ե.Հ.Կ.) 1254. 100—7

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքս-աղիքային հիւանդութիւններ։
Գրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում։
Ընդունելութիւն (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(ա. օ.) 1179. 100—31

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր (10—11 ժ. առ. (երեխաների)
(5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—47

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ԱՐՄՅԱՆՈ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ
(Հայերէն-ռուսերէն բառարան)
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲ.։ Պօստի ծախքով 1 ր. 30 կ.։
Կազմած՝ 25 կ., 40 կ. և 50 կօպ.։
Կարելի է ուղարկել և պօստի մարկներ։
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, Թիֆլիս։
(օ.մ.) 1306. 3—1

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1911 թ. „ԾՈՑԻ" ՕՐԱՑՈՑՑԸ
որը վաճառվում է Կովկասի քաղաքների յայտնի գրավաճառանոցներում և Թիֆլիսի խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողները դիմում են հետեւեալ հասցէով. Тифлисъ. Габаевская № 5, Макару Чимишкяну. Մակար Զմշկեանց։
(կ. ե.) 1300. 10—2

ԿՕՍՏԻՒՄ ԵՒ ԿՈՒՐՏԿԱ 5 Ր.50 Կ.
Առանց րիսկի։ Ուղ. ենք պօստով, վերադիր վճ.։ Եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։ 1) 4½ արշ. բրդէ արիկո 2 արշ. լայն., ամուր և էլեգանտ գործուածք, տաք. ամրող կօստիւմացու. 2) երկ-բօրտ պատրաստի տաղնտագործ կուրտկա՝ ձմեռվայ ժամանակ իւրաքանչիւրին անհրաժեշտ, ցոյց տրված չափսի։ Մի զոյգի համար ճանապարհածախքը հաշվում է 55 կօպ.։ Հասցէագրել՝ г. ЛОДЗЬ. ЛЬВУ РУБАШКИНУ. 257.
(Ե.) (В.89306) 1285. 10—1

ԿԱՐՈՒՉԵԻԻ
ԱԿԱԴԷՄԻԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԶԵՒՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Միակը Ռուսաստանում։ Կուրսերի ծրագիրը և ձևերու ձեռնարկը ուղարկվում են ձրի։
С.-Петербургъ, Невскій пр., 67. Правленіе О-ва Закройщиковъ.
(ռ.ե.) (П.120731) 1263. 4—4

№4711
ՎԱՐԴԻ
ԲԻՒՐԵՂԵԱՅ
ՍԱՊՕՆ
անպայման անհրաժեշտ է կաշուն և երեսի գոյնի բացիկնալ հոգացողութեան համար։
Գլիցերինի մեծաքանակ բովանդակումն, տնտեսութիւն՝ փրփուրի շատութեան պատճառով, վարդի հոտոյ անուշահոտութիւն,—տան յատկութիւններ, որոնք զանազանում են այդ սապօնը։
ԿՏՈՐԸ 25 ԿՕՊ.։
Իսկականը միայն մարկայով №4711
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ
Պարֆիւմերիա №4711 Կեօլնում՝ Բէնի վրա։
Հիմն. 1792.
ԲԱԺ. ՐԻԳԱՅՈՒՄ
Մատակ. շատ Բարձ. Պալատ.
Ծախվում է դեղատներում և դեղատնային ու պարֆիւմ. խանութներում։
PARFUMERIE F. MÜLHENS №4711
(23, դ.3, 15) (M. 339805) 1219. 3—1

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XXIX ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏՈՒԱՋ XXII ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ
Տարեկան բաժանորդները ստանում են.
I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով։
II. ՏԱՐԱՁ պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտ.» յաւելուածով։
III. ԱՌՈՂՋԱՊԱՀ պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մարքի առողջութիւնը» յաւելուածով։
IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակներ։
V. ԳԵՂԱՓՇԻԿ ՕՐԱՑՈՑՑ 1912 Թ.։
VI. ԱՐՕՁԱ, Fantasie իրականութիւնից։
VII. ՈԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցված թէ սեղանի վրա դնելու և թէ պատից կախելու։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՅՄԱՆՆԵՐԸ
ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր., (Արտասահման 5 ր.) Դպրոց. աշակ. հասցէով 1 ր.
ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման 3 ր.) » » » 1—50 կ.
ԱՂԲԻՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահման 7 ր.) » » » 2 ր. —
ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ, ՏԱՐԱՁ, ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ԳԵՂԱՓՇԻԿ ՕՐԱՑՈՑՑ ԱՐՕՁԱ, ՈԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Բոլոր յաւելուածներով և պրեմիաներով 10 ր. արտաս.-սահման 18 ր. միայն 50 ֆր. 5 Դպրոցական աշակերտ. համար հինգ ռ.
Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կը տան «Աղբիւրին», նրանց կուղարկվի 5 օրինակ «Աղբիւր» չքաւոր աշակերտների համար։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ" կամ „Таразъ".
Tiflis (Caucase) Direction „Agbür" կամ "Taraz".
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՐԵԱՆ
(Ե. ու.) 1234. 0—7

ՄԻ ՕՐԻՈՐԴ
որ աւարտել է գիմնազիան արծաթէ մէդալով, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ
—✻ ԴԱՍԵՐ ✻—
Պատրաստում է երկու սեռի երեխաներին սկզբնական քննութիւնների համար։ Կատարում է դասերի կրկնողութիւն բոլոր դասարանների համար։
ՀԱՄԱՁԱՅՆ Է ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՆԱԼՈՒ։
Հասցէն՝ Вознесенская, № 35. Учительницу.
(Ե.Հ.Կ.) 1303. 3—1

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԲԱՄԲԱԿԸ
ԵՒ
ՆՐԱ ՄԾԱԿՈՒԹԻՒՆԸ
Գործնական եւ լրիւ ձեռնարկ բամբակագործութեամբ պարապողների համար։
20 նկարներով
Գին 6 k 40 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ", կամ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և Բագու „Сотрудникъ"-ին։

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետեւեալ նոր ստացած գրքերը.

Աշէրօն.—«Գիւղատնտեսական հրատապ հարցերը»	— 20 կ.
Ահարոնեան.—«Խաւարի մէջ»	— 60 »
» «Մոխիրների տակից»	— 40 »
» «Անդունդը».	— 40 »
Այվազեանց Բ.—«Անիի կործանումը»	1 ր. — կ.
Աղայեան, Ահարոնեան, Թումանեան և Փափազեան.—«Հայ գրողները», Ա. հատոր՝ 2 ր., Բ. հատոր	2 ր. —
Բօչլէվ Վ.—«Մարդու ծագումը»	— 40 »
Գալաչեան.—«Կոօպերացիա» մասն 1.	— 20 »
Եսայեան.—«Տրիպէրը և նրա բժշկութիւնը», պատկեր.	— 20 »
» «Տղամարդի սեռական կեանքը»	— 30 »
Նկարիչ.—«Խելքի տոպրակներ», զօրավիգ իրական կեանքից	— 30 »
Շէրենց Գ.—Ալֆրեդ Դէրէսի կամ մի գիշեր Բաղէշի բանտում» 1890—96 թ.	— 20 »
Համամդ.—«Երիտասարդութեան մեղքերը, սեռական անզօրութիւն տղամարդկանց և կանանց», նկարներ.	1 ր. —
«Տատրակ Տարօնոյ», ազգային երգարան	— 60 »
Իսահակեան.—«Ժողովուրդը ժողովրդական լեգենդների մէջ»	— 10 »
Կուկունեան.—«Վերջին օրերս Սախալինում»	— 30 »
Կլէյն.—«Գործնական կաթնատնտեսութիւն», 48 նկարներով	— 50 »
Մուրադեան Մ.—«Սիֆիլիս», պատկերով	— 80 »
Յովհաննիսեան Գ.—«Բանաստեղծութիւններ»	1 ր. 50 »

Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ, Центральной книжной торговлѣ.
(կ. ե. ու.) 1298 3—2



ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուսել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները շափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ սքանչելի ոյժի միջոցներով դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառնաք պրոֆէսիոնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգեանաստեզիայի և Ցելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պէտք ուղարկել 10 կօպէկի նամակադրոշմ՝ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետեւեալ հասցէով Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե.շ.) 689. 100—49

Типографія "Экономія", Тифлисъ, Рань-Разъѣзд № 2.